ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-372-13.09.2022,20.10.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված հարկային արտոնությունների կիրառության կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասություն. «Սույն մասի կիրառության իմաստով տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ավարտվող բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) ԱՏԳ ԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, ԱՏԳ ԱԱ 31-րդ խմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, ԱՏԳ ԱԱ 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, ԱՏԳ ԱԱ 0106 41 000 ծածկագրին դասվող մեղուների, ԱՏԳ ԱԱ 0106 49 000 ծածկագրին դասվող գիտահետազոտական նպատակների կամ բույսերի պաշտպանության համար օգտակար միջատների, ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրին դասվող՝ բույսերի աճեցման համար նախատեսված կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի հիմքով սուբստրատների, ԱՏԳ ԱԱ 9406 90 310 0 ծածկագրերին դասվող ջեր-մոցների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.».

2) 21-րդ կետի «570110» թիվը փոխարինել «5701 10» թվով և «570210» թիվը փոխարինել «5702 10 000 0» թվով.

3) 26-րդ կետի «7109» թիվը փոխարինել «7109 00 000 0» թվով.

4) 27-րդ կետի «ծխախոտի արտադրանքի օտարումը» բառերը փոխարինել «այն ծխախոտի արտադրանքի օտարումը, որի առավելագույն մանրածախ գինը Կառավարության սահմանած կարգով ենթակա է ծխախոտի արտադրանքի տուփի վրա մակնշման» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ և 26-րդ կետերում, 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում, 389-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում և 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետում «ԱՏԳԱԱ» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 87-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 5-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝ «Սույն կետի կիրառության իմաստով՝ ծխախոտի արտադրանք են համարվում նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ ծխախոտ կամ վերականգնված ծխախոտ կամ նիկոտին կամ դրանց փոխարինիչներ պարունակող ապրանքները՝ նախատեսված առանց այրման ներշնչելու համար.».

2) 1-ին մասի վերջին պարբերության «ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2711 21 000 0 ծածկագրին» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 88-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «ապրանքային դիրքերին» բառերը փոխարինել «ծածկագրերին» բառերով,

բ. «2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012 2402 90 00012) և 2404 11 000 9» բառերը փոխարինել «2402 (բացառությամբ 2402 10 000 01, 2402 90 000 01, 2402 10 000 02, 2402 90 000 02), 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000» բառերով,

գ. աղյուսակում «2203» թիվը փոխարինել «2203 00» թվով, «2402 10 00011» թվերը փոխարինել «2402 10 000 01» թվերով, «2402 90 00011» թվերը փոխարինել «2402 90 000 01» թվերով, «2402 10 00012» թվերը փոխարինել «2402 10 000 02» թվերով, «2402 90 00012» թվերը փոխարինել «2402 90 000 02» թվերով, «2710 19 710» թվերը փոխարինել «2710 19 710 0» թվերով, «2710 19 980» թվերը փոխարինել «2710 19 980 0» թվերով, «2709» թիվը փոխարինել «2709 00» թվով, «2711 11» թիվը փոխարինել «2711 11 000 0» թվով, «2711 21» թվերը փոխարինել «2711 21 000 0» թվերով,

դ. աղյուսակի 9-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2206 00	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	150»

ե. աղյուսակում ուժը կորցրած ճանաչել 10-րդ տողը,

զ. աղյուսակի վերջին տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«2404 12 000 0 2404 19 000	ծխախոտի արտադրանք	1 միլիլիտր				55»

2) 6-րդ մասի «ԱՏԳԱԱ 220820» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2208 20» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 101-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի)» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2710 19 710 0 - 2710 19 980 0 ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 0 ծածկագրին դասվող շարժիչային յուղերի)» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.».

2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցները, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.»:

Հոդված 9. Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում և 3-րդ մասում «2206» թիվը փոխարինել «2206 00» թվով:

Հոդված 10. Օրենսգրքի 390-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակի՝

ա. «090300 000» թիվը փոխարինել «0903 00 000 0» թվով, «1505» թիվը փոխարինել «1505 00» թվով, «1506» թիվը փոխարինել «1506 00 000 0» թվով, «1510 00» թիվը փոխարինել «1510» թվով, «1601» թիվը փոխարինել «1601 00» թվով, «1603» թիվը փոխարինել «1603 00» թվով, «1903» թիվը փոխարինել «1903 00 000 0» թվով, «2006» թվերը փոխարինել «2006 00» թվերով, «2203» թիվը փոխարինել «2203 00» թվով, «3002 20 000» թիվը փոխարինել «3002 41 000 0» թվով, «3002 30 000» թիվը փոխարինել «3002 42 000 0» թվով, «3211 00» թիվը փոխարինել «3211 00 000 0» թվով,

բ. ԱՏԳ ԱԱ 2309 ծածկագրով տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«2404 12 000 0	նիկոտին պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ մեկ անգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության	Ծխախոտի արտադրանք
2404 19 000	նիկոտին չպարունակող, այդ թվում՝ ծխախոտի փոխարինիչներ պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ մեկ անգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության	Ծխախոտի արտադրանք

»,

գ. 3-րդ մասի «0903 00 000» թիվը փոխարինել «0903 00 000 0» թվով:

Հոդված 11. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում «2206» թիվը փոխարինել «2206 00» թվով:

Հոդված 12. Օրենսգրքի 394-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում «2206» թվերը փոխարինել «2206 00» թվերով.
2) 8-րդ մասում «1601» թիվը փոխարինել «1601 00» թվով, իսկ «1603» թիվը փոխարինել «1603 00» թվով:

Հոդված 13. Օրենսգրքի 396.1-ին հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը, դրոշմավորման ներդրման ժամկետները, այդ թվում՝ փորձնական ծրագրերի իրականացման ժամկետները, մինչև դրոշմավորման ներդրման ժամկետը չօտարված՝ դրոշմավորման ենթակա ապրանքային մնացորդների դրոշմավորման կարգը, դրոշմավորման կանոնները, Օրենսգրքով սահմանված դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման դադարեցման ժամկետները, ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիթորինգի տեղեկատվական համակարգի ներդրման առանձնահատկությունները հաստատում է Կառավարությունը:»:

Հոդված 14. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ամսվա 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Սույն օրենքի՝

1) 2–րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և այն տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ.

2) 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» և «զ» ենթակետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

3. Բույսերի աճեցման համար նախատեսված՝ կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի հիմքով սուբստրատի օտարման մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

4. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի իրացումը թույլատրվում է մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

5. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի՝ առանց դրոշմապիտակի իրացումը թույլատրվում է մինչև 2023 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

(Կ-372-13.09.2022,20.10.2022-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով նախատեսված հարկային արտոնությունների կիրառության կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր նախադասություն. «Սույն մասի կիրառության իմաստով տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և (կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ավարտվող բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) ԱՏԳ ԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, ԱՏԳ ԱԱ 31-րդ խմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, ԱՏԳ ԱԱ 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, ԱՏԳ ԱԱ 0106 41 000 ծածկագրին դասվող մեղուների, ԱՏԳ ԱԱ 0106 49 000 ծածկագրին դասվող գիտահետազոտական նպատակների կամ բույսերի պաշտպանության համար օգտակար միջատների, ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրին դասվող՝ բույսերի աճեցման համար նախատեսված կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի հիմքով սուբստրատների, ԱՏԳ ԱԱ 9406 90 310 0 ծածկագրերին դասվող ջեր-

մոցների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.».

2) 21-րդ կետի «570110» թիվը փոխարինել «5701 10» թվով և «~~5702 10~~ 570210» թիվը փոխարինել «5702 10 000 0» թվով.

3) 26-րդ կետի «7109» թիվը փոխարինել «7109 00 000 0» թվով.

4) 27-րդ կետի «ծխախոտի արտադրանքի օտարումը» բառերը փոխարինել «այն ծխախոտի արտադրանքի օտարումը, որի առավելագույն մանրածախ գինը Կառավարության սահմանած կարգով ենթակա է ծխախոտի արտադրանքի տուփի վրա մակնշման» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ և 26-րդ կետերում, 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում, 389-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում և 445-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետում «ԱՏԳԱԱ» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 87-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 5-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն՝ «Սույն կետի կիրառության իմաստով՝ ծխախոտի արտադրանք են համարվում նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ ծխախոտ կամ վերականգնված ծխախոտ կամ նիկոտին կամ դրանց փոխարինիչներ պարունակող ապրանքները՝ նախատեսված առանց այրման ներշնչելու համար.».

2) 1-ին մասի վերջին պարբերության «ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2711 21 000 0 ծածկագրին» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 88-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. «ապրանքային դիրքերին» բառերը փոխարինել «ծածկագրերին» բառերով,

բ. «2402 (բացառությամբ 2402 10 00011, 2402 90 00011, 2402 10 00012 2402 90 00012) և 2404 11 000 9» բառերը փոխարինել «2402 (բացառությամբ 2402 10 000 01, 2402 90 000 01, 2402 10 000 02, 2402 90 000 02), 2404 11 000 9, 2404 12 000 0 և 2404 19 000» բառերով,

գ. աղյուսակում «2203» թիվը փոխարինել «2203 00» թվով, «2402 10 00011» թվերը փոխարինել «2402 10 000 01» թվերով, «2402 90 00011» թվերը փոխարինել «2402 90 000 01» թվերով, «2402 10 00012» թվերը փոխարինել «2402 10 000 02» թվերով, «2402 90 00012» թվերը փոխարինել «2402 90 000 02» թվերով, «2710 19 710» թվերը փոխարինել «2710 19 710 0» թվերով, «2710 19 980» թվերը փոխարինել «2710 19 980 0» թվերով, «2709» թիվը փոխարինել «2709 00» թվով, «2711 11» թիվը փոխարինել «2711 11 000 0» թվով, «2711 21» թվերը փոխարինել «2711 21 000 0» թվերով,

դ. աղյուսակի 9-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2206 00	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	150»

ե. աղյուսակում ուժը կորցրած ճանաչել 10-րդ տողը,

զ. աղյուսակի վերջին տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«2404 12 000 0 2404 19 000	ծխախոտի արտադրանք	1 միլիլիտր			~~50~~	55»

2) 6-րդ մասի «ԱՏԳԱԱ 220820» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2208 20» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 101-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի)» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ 2710 19 710 0 - 2710 19 980 0 ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 0 ծածկագրին դասվող շարժիչային յուղերի)» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.».

2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցները, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.»:

~~Հոդված 8.~~Հոդված 9. Օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում և 3-րդ մասում «2206» թիվը փոխարինել «2206 00» թվով:

~~Հոդված 9.~~Հոդված 10. Օրենսգրքի 390-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակի՝

ա. «090300 000» թիվը փոխարինել «0903 00 000 0» թվով, «1505» թիվը փոխարինել «1505 00» թվով, «1506» թիվը փոխարինել «1506 00 000 0» թվով, «1510 00» թիվը փոխարինել «1510» թվով, «1601» թիվը փոխարինել «1601 00» թվով, «1603» թիվը փոխարինել «1603 00» թվով, «1903» թիվը փոխարինել «1903 00 000 0» թվով, «2006» թվերը փոխարինել «2006 00» թվերով, «2203» թիվը փոխարինել «2203 00» թվով, «3002 20 000» թիվը փոխարինել «3002 41 000 0» թվով, «3002 30 000» թիվը փոխարինել «3002 42 000 0» թվով, «3211 00» թիվը փոխարինել «3211 00 000 0» թվով,

բ. ԱՏԳ ԱԱ 2309 ծածկագրով տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«2404 12 000 0	նիկոտին պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ մեկ անգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության	Ծխախոտի արտադրանք
2404 19 000	նիկոտին չպարունակող, այդ թվում՝ ծխախոտի փոխարինիչներ պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ մեկ անգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության	Ծխախոտի արտադրանք

»,

գ. 3-րդ մասի «0903 00 000» թիվը փոխարինել «0903 00 000 0» թվով:

~~Հոդված 10.~~Հոդված 11. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում «2206» թիվը փոխարինել «2206 00» թվով:

~~Հոդված 11.~~Հոդված 12. Օրենսգրքի 394-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասում «2206» թվերը փոխարինել «2206 00» թվերով.

2) 8-րդ մասում «1601» թիվը փոխարինել «1601 00» թվով, իսկ «1603» թիվը փոխարինել «1603 00» թվով:

~~Հոդված 12.~~Հոդված 13. Օրենսգրքի 396.1-ին հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային համաձայնագրերի հիման վրա հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը, դրոշմավորման ներդրման ժամկետները, այդ թվում՝ փորձնական ծրագրերի իրականացման ժամկետները, մինչև դրոշմավորման ներդրման ժամկետը չօտարված՝ դրոշմավորման ենթակա ապրանքային մնացորդների դրոշմավորման կարգը, դրոշմավորման կանոնները, Օրենսգրքով սահմանված դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման

դադարեցման ժամկետները, ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիթորինգի տեղեկատվական համակարգի ներդրման առանձնահատկությունները հաստատում է Կառավարությունը:»:

~~Հոդված 13.~~Հոդված 14. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ամսվա 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Սույն օրենքի՝

1) 2–րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը և այն տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ.

2) 6-րդ հոդվածի 1-ին ~~մասի «զ» կետն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից~~ կետի «դ» և «զ» ենթակետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

3. Բույսերի աճեցման համար նախատեսված՝ կոկոսի (հնդընկույզի) մանրաթելի հիմքով սուբստրատի օտարման մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

4. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի իրացումը թույլատրվում է մինչև ~~2022 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ~~ 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ:

5. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև ~~2022 թվականի նոյեմբերի 30-ը~~ 2023 թվականի փետրվարի 28-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի՝ առանց դրոշմապիտակի իրացումը թույլատրվում է մինչև ~~2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ 2023 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-372-13.09.2022,20.10.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկ-տեմբերի 4-ի հարկային օրենսգրքի» բառերը փոխարինել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենս-գրքի» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաջորդականությունը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետի «5702 10» թիվը փոխարինել «570210» թվով՝ հաշվի առնելով այն, որ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

			21-րդ կետում նշյալ ծածկագիրն սահմանված է միասին:	փոփոխություն:	
3.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետի «զ» ենթակետով լրացվող աղյուսակում «50» թիվը հանել՝ հաշվի առնելով, այն որ նախագծով առաջարկվում է սահմանել, որ նշյալ աղյուսակով նախատեսված ապրանքներն ակցիզային հարկով հարկվելու են 2023 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	**7-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածից հետո ավելացնել նոր 8-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 8. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշ-տամունքային անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.». 2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է:

			Էջմիածնին) սեփականության և անհատույց մշտական օգտագործման իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշ-տամունքային անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող եկեղեցիները, հոգևոր-մշակութային, կրթադաստիարակչական, եկեղեցական և ծիսական պարագա-ների արտադրության և իրացման համար օգտագործվող անշարժ գույքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներքին սպասարկումն իրականացնող արհեստանոցները, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ անշարժ գույքը: Սույն կետում նշված անշարժ գույքերի ցանկը սահմանում է Կառավարությունը.»: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով Կառավարությանը լիազորություն է վերապահված սահմանելու միայն անշարժ գույքի հարկից ազատվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփակա-		

			նություն համարվող պատմամշակութային նշանակության հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքերի ցանկ: Մինչդեռ՝ անհրաժեշտ է որպեսզի Կառավարությունը սահմանի նաև անշարժ գույքի հարկից ազատվող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային անշարժ գույքերի ցանկ: Մյուս կողմից, Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի «ա.» ենթակետով նախատեսված կարգավորումը սահմանված է նաև նույն կետի «բ.» ենթակետով: Այս առումով, հնարավոր տարընկալումներից խուսափելու նպատակով՝ առաջարկվում է խմբավորել նշյալ երկու ենթակետերը:		
5.	**ՀՀ կառավարություն**	**8-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածից հետո խմբագրել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

6.	**ՀՀ կառավարություն**	**14-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասի 2-րդ կետում «մասի «զ» կետն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «կետի «դ» և «զ» ենթակետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից» բառերով, 2) 4-րդ մասում «2022 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ» բառերը փոխարինել «2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ» բառերով, 3) 5-րդ մասում «2022 թվականի նոյեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2023 թվականի փետրվարի 28-ը» բառերով և «2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ» բառերը փոխարինել «2023 թվականի մարտի 31-ը ներառյալ» բառերով: Հաշվի առնելով այն, որ նախագծի նախնական տարբերակով նախատեսված էր, որ որոշ կարգավորումներ պետք է ուժի մեջ մտնեին ս.թ. հոկտեմբերի 1-ից, իսկ այդ ժամկետն անցել է՝ անհրաժեշտություն է առաջացել վերանայել խնդրո առարկա դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետները, ինչպես նաև այդ դրույթներին փոխկապակցված դրույթների գործողության ժամկետները:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի վերնագիր**	Առաջարկվում է նախագծի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետի «բ.» ենթակետ**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետի «բ.» ենթակետում «լրացնել» բառից առաջ լրացնել «ԱՏԳ ԱԱ 1212 ծածկագրով տողից հետո» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետում «ԱԱՀ» և «ԱԱՀ-ից» բառերը փոխարինել՝ համա-պատասխանաբար «Ավելացված արժեքի հարկ» և «ավելացված արժեքի հարկից» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: